ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

368
Ի-25

# ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ 19 ՄԱՅԻՍԻ 1940 Թ.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԳԻ

ԵՐԵՎԱՆ 1940

1 MAR 2010

2396
40

# ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

*«Պարտադիր կոպարային ապահովագրության մասին» ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 6-րդ սեսիայի կողմից 1940 թվի ապրիլի 4-ին ընդունված օրենքի հիման վրա, Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը* վորոշում է.

*Պարտադիր կոպարային ապահովագրությունը Հայկական ԽՍՀ-ում կիրառել հետևյալ հիմունքներով.*

### I. Ի՞ՆՉՊԻՍԻ ԳՈՒՅՔՆ Է ՑԵՆԹԱԿԱ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

1. *Կոլխոզներում պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա յեն.*

*ա) շենքերը, ինվենտարը, սարքավորումը, տրանսպորտային միջոցները, արտադրանքը, հումքը և նյութերը.*

*բ) գյուղատնտեսական կուլտուրաների ցանքերը (այդ թվում նաև սածիլանոցներում, ջերմոցներում ու ջերմատներում գտնվողները), տնկարանները և այգիների, պտղանոցների ու խաղողի այգիների բերքը.*

*գ) խոշոր յեղջերավոր անասունները, վոչխարները, այծերը և խոզերը՝ սկսած 6 ամսական հասակից. ձիերը, ուղտերը, ավանակները և ջորիները՝ սկսած 1 տարեկան հասակից, իսկ ձիերի, ուղտերի և ավանակների տոհմային մատղաշը՝ սկսած 6 ամսական հասակից:*

2. *Քաղաքացիների տնտեսություններում պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա յե անձնական սեփականության իրավունքով նրանց պատկանող հետևյալ գույքը.*

*ա) շենքերը.*

*բ) խոշոր յեղջերավոր անասունները՝ սկսած 6 ամսական հասակից, ձիերը, ուղտերը, ավանակները, ջորիները, վոչխարները և այծերը՝ ըսկսած 1 տարեկան հասակից. խոզերը՝ սկսած 9 ամսական հասակից.*

*գ) գյուղատնտեսական կուլտուրաների դաշտային ցանքերը:*

### II. Ի՞ՆՉՊԻՍԻ ԴԵՊՔԵՐՈՒՄՆ ԵՆ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԸ.

3. *Շենքերի, իսկ կոլխոզներում, բացի դրանից, ինվենտարի, սարքավորման, տրանսպորտային միջոցների, արտադրանքի, հումքի և նյութերի ապահովագրության գծով Պետապը հատուցում է կրակից, շանթահարությունից, պայթյունից (թեկուզ և շանթահարությունը կամ պայթյունը հրդեհ չառաջացնեն), ջրհեղեղից, յերկրաշարժից, մրրիկներից, փոթորիկներից, տարափից, կարկտից, փլվածքներից և գետնի նստվածքներից առաջացած վնասները:*

*Պետապն ապահովագրվածներին վնասները հատուցում է նաև այն դեպքում, յերբ հրդեհի տարածումը դադարեցնելու կամ հեղեղման հանկարծակի սպառնալիքի ժամանակ անհրաժեշտ է յեղել քանդել կառուցումը, կամ թե այն փոխադրել ուրիշ տեղ:*

4. *Գյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրության գծով Պետապը հատուցում է այն վնասները, վորոնք առաջացել են.*

09 SEP 2013

43.874

ա) կարկտահարությունից, տարափից, մրրիկներից և ցանքերի հրդեհվելուց.

բ) Թրջվելուց, սառչելուց, փտելուց, այազներից և հեղեղումներից:

5. Բամբակի, քունջութի, արախիսի, ծխախոտի, մախորկայի, բրնձի, խորդենու, արջախաղողի, վալերիանայի, կամֆորային բազիլեկի, լյուֆֆայի, անանուխի, չամանի, դալմաթյան յերիցուկի, կազանլըկյան վարդի ցանքերի, ինչպես նաև գայլուկի բերքի ապահովագրության գծով հատուցվում են այն վնասները, վորոնք առաջացել են կարկտահարությունից, տարափից, մրրիկներից, ցանքերը հրդեհվելուց, Թրջվելուց, սառելուց, փտելուց, այազներից, հեղեղումներից և յերաշտից:

6. Անասունների ապահովագրության գծով Պետապը հատուցում է անասունների այնպիսի անկման վընասները, վորն առաջացել է հիվանդության, ծերության և դժբախտ դեպքի հետևանքով:

Պետապը նաև հատուցում է անասունը հարկադրված կերպով մորթելուց (մորթոտելուց) առաջացած վընասները.

ա) յեթե անասունը մորթվել է անասնաբույժի կամ անասնաբուժակի կարգադրությամբ, անասնաճարակի դեմ պայքարելու գծով ձեռնարկումներ կիրառելու կապակցությամբ.

բ) յեթե անասունը մորթվել է անասնաբույժի, անասնաբուժակի, իսկ նրանց բացակայության դեպքում՝ գյուղական խորհրդի դեպուտատի կարգադրությամբ, յերբ անասունի հետ պատահել է դժբախտ դեպք և նրան անխուսափելի կորուստ է սպառնում.

գ) յեթե անասունը մորթվել է անասնաբույժի կամ անասնաբուժակի կարգադրությամբ՝ անբուժելի հիվանդության հետևանքով, վորը բացառում է անասունի հետագա օգտագործման հնարավորությունը:

7. Գույքի պարտադիր կոպարային ապահովագրություն (կ. կ. 1 և 2) այնպիսի տարերային աղետներից, վորոնք Թվարկված են 3, 4, 5, և 6-րդ կետերում,— կատարվում է ամենուրեք:

## III. ԻՆՉՊԻՍԻ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ Է ՎՃԱՐՎՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

8. Կոլխոզներին պատկանող շենքերը, ինվենտարը, սարքավորումը, տրանսպորտային միջոցները, արտադրանքը, հումքը, նյութերը կրակից և տարերային այլ աղետներից վոչընչանալու դեպքում (3-րդ կետ) ապահովագրական հատուցումը վճարվում է գույքի լրիվ արժեքով՝ ըստ ինվենտարային գնահատման, իսկ անձնական սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող շենքերը վոչնչանալու դեպքում — շենքերի լրիվ արժեքով՝ ըստ ապահովագրական գնահատման (քաղաքային վայրերում՝ ըստ Հայկական ԽՍՀ կոմունալ տնտեսության ժողովրդական կոմիսարիատի օրգանների կողմից վորոշվող գնահատության):

9. Գյուղատնտեսական կուլտուրաների վոչնչանալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է հետևյալ նորմաներով (ռուբլիներով՝ մեկ հեկտարի համար):



| Կուլտուրաների անունը | Ապահովագրական ապահովման նորմաները ռուբլիներով՝ մեկ հեկտարի համար. | |
|---|---|---|
| | Կոլխոզներին | Անհատական տնտեսություններին |
| 1. Հացահատիկային կուլտուրաներ, լոբազգիներ, գանգրավուշ, ցանովի խոտաբույսեր (բացի ցանովի խոտաբույսերի սերմնացներից), արևածաղիկ, սիլոսային կուլտուրաներ, քունջութ. | | |
| ա) Վաղարշապատի, Վեդու, Կոտայքի, Աշտարակի, Զանգիբասարի, Ղամարլույի, Հոկտեմբերյանի և Յերևանի (Գյուղական) շրջաններում | 100 | 70 |
| բ) Մնացած շրջաններում | 90 | 70 |
| 2. Բանջարանոցային կուլտուրաներ և այդ կուլտուրաների սերմնացներ, բոստանային կուլտուրաներ. | | |
| ա) Վաղարշապատի, Վեդու, Կոտայքի, Աշտարակի, Զանգիբասարի, Ղամարլույի, Հոկտեմբերյանի և Յերևանի (Գյուղական) շրջաններում | 900 | 650 |
| բ) Մնացած շրջաններում | 800 | 650 |
| 3. Այգիներ (այդ Թվում՝ ցիտրուսային տնկարաններ), պտղանոցներ. | | |
| ա) Ղամարլույի, Վեդու, Կոտայքի, Աշտարակի, Հոկտեմբերյանի, Զանգիբասարի, Վաղարշապատի և Յերևանի (Գյուղական) շրջաններում | 1200 | — |
| բ) Մնացած շրջաններում | 1000 | — |
| 4. Խաղողի այգիներ. | | |
| ա) Ղամարլույի, Վեդու, Կոտայքի, Հոկտեմբերյանի, Զանգիբասարի, Վաղարշապատի, Աշտարակի և Յերևանի (գյուղական) շրջաններում | 1800 | — |
| բ) Մնացած շրջաններում | 1500 | — |
| 5. Բամբակ՝ բոլոր շրջաններում | 400 | 300 |
| 6. Ծխախոտ՝ դեղին և սիգարի. | | |
| ա) Ալավերդու, Աշտարակի, Իջևանի, Ղափանի, Կոտայքի, Շամշադինի և Միկոյանի շրջաններում | 1500 | 1000 |
| բ) Մնացած շրջաններում | 1200 | 1000 |
| 7. Գայլուկ. | | |
| ա) աճման առաջին տարվա համար. | 500 | 400 |
| բ) աճման յերկրորդ տարվա համար. | 1000 | 800 |

| Կուլտուրաների անունը | Ապահովագրական ապահովման նորմաները ռուբլիներով՝ մեկ հեկտարի համար. Կոլխոզներին | Անհատական տնտեսություններին |
|---|---|---|
| գ) աճման յերրորդ տարվա համար . | 2000 | 1500 |
| դ) աճման հաջորդ տարիների համար . . . . . | 3500 | 2500 |
| 8. Վալերիանա, արջախաղող, խորդենի, կազանլըկյան վարդ, լյուֆա, արախիս՝ բոլոր շրջաններում . | 600 | 400 |
| 9. Ծխախոտի, կաղամբի, տոմատի և այլ կուլտուրաների սածիլներ, խաղողի տնկարաններ, պտղատու ծառերի և այլ կուլտուրաների տնկարաններ՝ բոլոր շրջաններում . . . | 10.000 | — |
| 10. Կարտոֆել, արմատապտուղներ (այդ թվում շաքարի ճակնդեղ), արմատապտուղների սերմանոցներ, ցանովի խոտաբույսերի սերմանոցներ, բրինձ, վուշ-դոլգունեց, հյուսիսային և հարավային կանեփ, ծխախոտ-բակուն, դալմաթյան յերիցուկ, մախորկա և այլ կուլտուրաներ՝ բոլոր շրջաններում . . . . . | 250 | 200 |

10. Անասունների անկման դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է հետևյալ նորմաներով (ռուբլիներով՝ մեկ անասունի համար).

| Անասունների տեսակը | Կոլխոզներին | Քաղաքացիների տնտեսություններին (անձնական սեփականություն): |
|---|---|---|
| 1. Խոշոր յեղջերավոր անասուններ. | | |
| ա) Կալինինոյի, Ստեփանավանի, Ամասիայի, Ղուկասյանի, Բասարգեչարի և Սիսիանի շրջաններում . | 300 | 250 |
| բ) Մնացած շրջաններում . . | 250 | 200 |
| 2. Ձիեր և ջորիներ՝ բոլոր շրջաններում . . . . . . | 350 | 250 |
| 3. Ուղտեր՝ բոլոր շրջաններում . | 300 | 250 |
| 4. Ավանակներ՝ բոլոր շրջաններում . | 100 | 80 |
| 5. Վոչխարներ և այծեր բոլոր շրջաններում . . . . . | 60 | 50 |
| 6. Խոզեր՝ բոլոր շրջաններում . | 80 | 60 |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Մեկ տարեկանից (իսկ կոլխոզներին պատկանող տոհմային ձիերի, ուղտերի և ավանակների նկատմամբ՝ 6 ամսականից) մինչև յերկու տարեկան ձիերի, ուղտերի և ավանակների, 18 տարեկանից բարձր ձիերի, ինչպես նաև 6 ամսականից մինչև մեկ տարեկան խոշոր յեղջերավոր անասունների ապահովագրության գծով, ապահովագրական ապահովության նորման իջեցվում է 50 տոկոսով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Կոլխոզներին պատկանող 2 տարեկանից բարձր տոհմային ձիերը, ուղտերը և ավանակները, ինչպես նաև 1 տարեկանից բարձր տոհմային խոշոր յեղջերավոր անասունները, վոչխարները, խոզերը ապահովագրվում են ապահովագրական գնահատման լրիվ արժեքով:

11. Այս օրենքում մատնանշված՝ ապահովման նորմաներով ապահովագրական հատուցումը վճարել այն վնասների համար, վորոնք առաջացել են 1941 թվի հունվարի 1-ից սկսած:

12. Ապահովագրական հատուցումը ապահովագրական ապահովման լրիվ գումարով վճարվում է միմիայն գույքի լիակատար փչացման դեպքում. մասնակի վնասվածքի դեպքում վճարվում է ապահովագրական ապահովման գումարի համապատասխան մասը:

Անասունների անկման դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովման նորմայի չափով, բայց այդ անասունների առողջ վիճակում ունեցած իսկական արժեքից վոչ ավելի:

## IV. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

13. Սահմանել ապահովագրական վճարումների հետևյալ դրույքները (տարիֆները ռուբլիներով՝ ապահովագրական ապահովման 100 ռուբլուց).

### Ա. ԿՐԱԿԻՑ ՅԵՎ ԱՅԼ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

| Ապահովագրության օբյեկտները | Ռուբլիներով՝ ապահովագրական ապահովման 100 ռուբլուց: Կոլխոզներում | Կոլխոզնիկների տնտեսութ. | Մենատնտ. տնտեսութ. |
|---|---|---|---|
| Քաղաքներում, բանվորական և քաղաքային ավաններում. | | | |
| 1. Շենքեր, արտադրանք, հումք և նյութեր . . . . . . | 0,30 | 0,50 | 0,50 |
| 2. Ինվենտար, սարքավորում և տրանսպորտային միջոցներ . . | 0,30 | — | — |
| Գյուղական վայրերում. | | | |
| 1. Շենքեր, արտադրանք, հումք և նյութեր . . . . . . | 0,50 | 0,70 | 1,00 |
| 2. Ինվենտար, սարքավորում և տրանսպորտային միջոցներ . . | 0,30 | — | — |

| Անասունների տեսակները | Շրջանների անունները | Ռուբլիներով՝ ապահովագրական ապահովման 100 ռուբլուց: կոլխոզ-ներում | կոլխոզ-նիկների տնտեսութ. | Միանձն. տնտեսութ. |
|---|---|---|---|---|
| Ձիեր, ջորիներ | 1· Ալագյազի, Արթիկի, Դուզքենդի, Վեդու, Ղափանի, Կրասնոսելսկի, Միկոյանի, Հոկտեմբերյանի, Թալինի, Վաղարշապատի, Դիլիջանի, Գորիսի և Ցերեվանի (Գյուղական) շրջաններում | 7,00 | 8,00 | 14,50 |
| | 2· Մնացած շրջաններում | 5,60 | 8,00 | 14,50 |
| Ավանակներ, ուղտեր· | Բոլոր շրջաններում | 5,00 | 7,00 | 9,00 |
| Խոշոր եղջերավոր անասուններ· | 1· Ալավերդու, Արթիկի, Ախտայի, Աշտարակի, Զանգիբասարի, Վեդու, Իջևանի, Ղափանի, Կրասնոսելսկի, Մեղրու, Դուզքենդի, Միկոյանի, Նոյեմբերյանի, Հոկտեմբերյանի, Սիսիանի, Ծամշադինի, Վաղարշապատի, Դիլիջանի, Ն· Բայազետի, Գորիսի. Կիրովականի, Ցերեանի (Գյուղական) շրջաններում | 2,10 | 3,00 | 5,00 |
| | 2· Մնացած շրջաններում | 1,80 | 3,00 | 5,00 |
| Վոչխարներ և այծեր· | Բոլոր շրջաններում | 3,00 | 5,00 | 7,00 |
| Խոզեր· | Բոլոր շրջաններում | 4,00 | 6,00 | 8,00 |

## Գ· ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

| Շրջաններ | Ռուբլիներով՝ ապահովագրական ապահովման 100 ռուբլուց: Կոլխոզներում | Միանձն. տնտեսութ. |
|---|---|---|
| ա) Գյուղատնտեսական կուլտուրաները կարկտահարությունից, տարափից, մրրիկներից և կրակից արմատի վրա ապահովագրելու գծով՝ բոլոր շրջաններում | 2,50 | 5,00 |
| բ) Թրջվելուց, սառչելուց, փտելուց, այգներից և հեղեղումներից ապահովագրելու գծով· | | |
| Աշնանացանը և բազմամյա ցանովի խոտաբույսերը՝ բոլոր շրջաններում | 3,50 | 9,00 |
| Գյուղատնտեսական այլ կուլտուրաները՝ բոլոր շրջաններում | 1,70 | 5,00 |

14· Այս վորոշման 5-րդ կետում թվարկված գյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրության գծով սահմանել ապահովագրական վճարումների հետևյալ դրույքները (տարիֆները ռուբլիներով՝ ապահովագրական ապահովման 100 ռուբլուց)·

| Կուլտուրաների անունը | կոլխոզներում | Միանձն. տնտեսութ. |
|---|---|---|
| 1· Բամբակ | 3,50 | 6,00 |
| 2· Ծխախոտ (դեղին, սիգարի և բակուն) | 7,00 | 10,00 |
| 3· Մախորկա | 6,00 | 9,00 |
| 4· Այս վորոշման 5-րդ կետում թվարկված մյուս կուլտուրաները | 8,00 | 12,00 |

15· Բանվորներին, ծառայողներին և կոոպերացված տնայնագործներին պատկանող գույքի պարտադիր կոպարային ապահովագրության գծով կիրառել ապահովագրական վճարումների այն դրույքները (տարիֆները), վորոնք սահմանված են կոլխոզնիկների տնտեսությունների համար (տնտեսության չհանրայնացված մասի գծով), իսկ չկոոպերացված տնայնագործներին, արհեստավորներին և այլ քաղաքացիներին պատկանող գույքի նկատմամբ՝ անհատական տնտեսությունների համար սահմանված դրույքները։

16· Գարնանացան և աշնանացան ցանքերի ապահովագրության վճարումները հաշվել յուրաքանչյուր տնտեսությունից՝ ըստ ցանքի պլանի, բազմամյա խոտաբույսերի նախորդ տարիների ցանքի ապահովագրության գծով՝ ըստ հնձի պլանի, իսկ այգիների, պտղանոցների և այլ տնկարանների ապահովագրության գծով՝ ըստ փաստացի տարածության։ Պլանից ավելի ցանված տարածությունները ապահովագրել ձրի։

17· Պարտադիր կոպարային ապահովագրության վճարումները հաշվըվում են Պետապի որգանների կողմից։ Յուրաքանչյուր ապահովագրվողին ստորագրությամբ հանձնվում է վճարման ծանուցումը՝ Պետապի կողմից սահմանված ձևով։ Վճարումներն ապահովագիրներից (բացի կոլխոզներից) գյուղական վայրերում գանձվում են շրջանային ֆինանսական բաժինների հարկային գործակալների միջոցով, իսկ կոլխոզներից և քաղաքային վայրերում գանվող ապահովագրվողներից՝ Պետապի որգանների միջոցով։

18· ցուցակագրման ժամանակ թաքցրած կամ թե բաց թողնված այնպիսի գույքի հայտաբերման դեպքում, վորը յենթակա յե պարտադիր կոպարային ապահովագրության, ապահովագրական վճարումները գանձվում են այն ամբողջ ժամանակի համար, վորի ընթացքում գույքը հաշվի առնված չի յեղել,

սակայն վոչ ավելի, քան յերկու տարվա համար։

19. Պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա գույքի ցուցակագրումը կատարվում է տարին մեկ անգամ։ Ապահովագրական վճարումները հաշվվում են այն գույքի համաձայն, վորը հաշվի յե առնըված այդ ցուցակագրության ժամանակ։ Ցուցակագրությունից հետո ապահովագրվողի տնտեսության մեջ մանող գույքի համար ապահովագրական վճարումներ գանձվում են միայն գույքի հաջորդ հերթական հաշվառումը կատարելուց հետո։

20. Վնասների համար տրվող ապահովագրական հատուցման գումարներից պահվում են միայն ապահովագրական վճարումները և այդ գծով յեղած ապառքները։

21. Սահմանել պարտադիր կոպարային ապահովագրության վճարումների մուծման հետևյալ ժամկետները․

ա) կոլխոզների համար՝ վճարման 40 տոկոսը մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը, 30 տոկոսը՝ մինչև նոյեմբերի 1-ը՝ և 30 տոկոսը՝ մինչև դեկտեմբերի 1-ը․

բ) կոլխոզնիկների, բանվորների, ծառայողների, մենատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների համար՝ վճարման 50 տոկոսը մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը և 50 տոկոսը՝ մինչև նոյեմբերի 1-ը։

22. Ժամկետին չմուծված ապահովագրական վճարումներն ապառքի յեն վերածվում։ Ապառքի վրա տույժ է հաշվվում յուրաքանչյուր ժամկետանց որվա համար հետևյալ չափով․

ա) կոլխոզներից—0,05 տոկոս․

բ) քաղաքացիների տնտեսություններից—0,1 տոկոս։

23. Պարտադիր կոպարային ապահովագրության վճարումներից ըստացված մուտքի ընդհանուր գումարի 15 տոկոսը մասնահանվում է հրդեհների ու անասունների անկումը կանխելու և դրանց դեմ պայքարելու գծով կատարվող ծախսերի համար։

24. Պետական ապահովագրության գծով մասսայական աշխատանք կատարելու և ապահովագրական ակտիվին (հասարակական ապահովագրական տեսուչներին, կոլխոզներին կից ապահովագրական պոստերի անդամներին և այլն) պարգևատրելու համար մասնահանումներ սահմանել պարտադիր կոպարային ապահովագրության վճարումներից ստացվող մուտքերի 0,5 տոկոսի չափով։

## V. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

25. Անասնապահության զարգացմանն աջակցելու նպատակով, կոլխոզներին տրվում են հետևյալ արտոնությունները․

ա) տոհմային անասունների ապահովագրության գծով— զեղչ ապահովագրական վճարումից՝ 20 տոկոսի չափով․

բ) ապրանքային ֆերմաներում գտնվող անասունների ապահովագրության գծով— զեղչ ապահովագրական վճարումից՝ 20 տոկոսի չափով․

գ) անասնապահության զարգացման պետական պլանը գերակատարող և անասունների պահպանման գծով լավագույն ցուցանիշներ ունեցող կոլխոզներին— զեղչ անասունների ապահովագրության համար հաշվված ապահովագրական վճարումների գումարից՝ մինչև 25 տոկոսի չափով։

26. Հակահրդեհային պահպանության վիճակի լավագույն ցուցանիշներ ունեցող և հրակայուն տանիքներով (կղմինդրից, յերկաթից, շիֆերից և այլն) շենքեր կառուցող կոլխոզները զեղչ են ստանում շենքերի, ինվենտարի, սարքավորման, տրանսպորտի միջոցների, արտադրանքի, հումքի և նյութերի ապահովագրության վճարումների հաշվված գումարից՝ մինչև 50 տոկոսի չափով։

27. 25-րդ կետի «գ» պարագրաֆում և 26-րդ կետում մատնանշված զեղչերի չափն առանձին կոլխոզների համար սահմանվում է աշխատավորների դեպուտատների շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների վորոշումներով, կոլխոզներում ապահովագրված գույքի վիճակի ըստուգման ակտերի հիման վրա։

28. Խոշոր յեղջերավոր անասունների՝ 6 ամսականից մինչև մեկ տարեկան մատղաշը և ձիերի, ուղտերի, ավանակների ու ջորիների՝ մեկ տարեկանից մինչև 2 տարեկան մատղաշը (իսկ ձիերի, ուղտերի ու ավանակների 6 ամսականից մինչև 2 տարեկան տոհմային մատղաշը) ապահովագրվում է առանց ապահովագրական վճարումների գանձման։

29. Աշխատավորների դեպուտատների շրջանային և քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեները Պետապի որգանների առաջարկությամբ կարող են քաղաքացիների առանձին տնտեսությունները մասամբ կամ լրիվին ազատել պարտադիր կոպարային ապահովագրության ապահովագրական վճարումներից։

30. Վերաբնակվածները, ինչպես նաև վերաբնակվածներից նոր կազմակերպվող կամ վերաբնակվածներին իրենց կազմի մեջ ընդունող կոլխոզները բնակեցման վայրում ազատվում են ապահովագրական վճարումներ մուծելուց՝ ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1937 թվի նոյեմբերի 17-ի «Գյուղատնտեսական վերաբնակեցման գծով տրվող արտոնությունների մասին» № 115/2043 վորոշմանը համապատասխան (ԽՍՀՄ Որենքների ժողովածու, 1937 թ․ № 73, էջ 352)։

31. Տվյալ տարվա մինչև սեպտեմբերի 15-ը կոլխոզները մտած տնտեսությունների չհանրայնացված գույքի ապահովագրության ապահովագրական վճարումները հաշվվում են կոլխոզնիկների տնտեսությունների համար սահմանված դրույքներով (տարիֆներով)։

## VI. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Կոլխոզները և այլ ապահովագրվողները պարտավոր են գույքը և ցանքերը պահել լիակատար կանոնավոր վիճակում և հակահրդեհային, ագրոնոմիկական ու անասնաբուժական կանոններին խստորեն համապատասխան, ձեռք առնել իրենցից կախված բոլոր միջոցները՝ հրդեհները, անասունների հիվանդությունները և այլն կանխելու համար։

33. Ապահովագրված գույքը տարերային աղետից վոչնչանալու կամ վնասվելու մասին ապահովագրվողները պետք է հաղորդեն՝ կոլխոզները— գյուղական խորհրդին և ապահովագրական տեսչին, կոլխոզնիկներն ու մենատնտեսները — գյուղական խորհրդին։ Այդ հայտարարությունները պետք է արվեն վոչ ուշ հետևյալ ժամկետներից․

ա) շենքերը և այլ գույքը հրդեհից, ջրհեղեղից և այլնից վոչնչանալու դեպքում, ինչպես նաև անասունի անկման դեպքում—վոչ ուշ, քան մեկ որ՝ տարերային աղետի կամ դժբախտ դեպքի որից հաշված։

բ) գյուղատնտեսական կուլտուրաների վոչնչացման կամ վնասվելու դեպքում վոչ ուշ, քան 5 որ՝ այն որից հաշված, յերբ նկատվել է նըրանց վնասվելը կամ վոչնչանալը։

Ապահովագրվողներից ստացված հայտարարությունների մասին, բացի անասունների անկմանը վերաբերող հայտարարություններից (34-րդ կետ), գյուղական խորհուրդները պարտավոր են վոչ ուշ քան հաջորդ որը հայտնել շրջանային ապահովագրական տեսչությանը։

## VII. ՎՆԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԿՏԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

34. Ապահովագրված անասունների անկման դեպքում գյուղական վայրերում ակտերը կազմվում են աշխատա-

վարների ղեկավարների՝ գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի կամ թե նրա կողմից լիազորված՝ գյուղական խորհրդի դեպուտատների միջոցով, իսկ քաղաքային վայրերում — ապահովագրական տեսուչների կամ անասնաբույժների միջոցով: Ակտերը կազմվում են հետեվյալ անձանց պարտադիր մասնակցությամբ — կոլխոզում առաջացած վնասի դեպքում՝ վարչության նախագահի կամ վարչության կողմից հատկապես լիազորված անդամի, իսկ կոլխոզնիկի տնտեսության մեջ կամ անհատական տնտեսության մեջ առաջացած վնասի դեպքում՝ տնտեսության ղեկավարի կամ ընտանիքի չափահաս անդամի մասնակցությամբ: Ակտերը կազմվում են յերկու վկաների ներկայությամբ:

35. Ցենքերի, խնվենտարի, գյուղատնտեսական կուլտուրաների և այլ գույքի վոչնչանալու կամ վնասվելու դեպքում ակտերը կազմվում են Պետապի որգանների կողմից: Ակտերը կազմվում են ապահովադրի (34-րդ կետ), գյուղական խորհրդի ներկայացուցչի և յերկու վկաների պարտադիր մասնակցությամբ, իսկ գյուղատնտեսական կուլտուրաների վոչնչացման դեպքում՝ նաև ագրոնոմի մասնակցությամբ:

36. Պետապը վնասները չի հատուցում այն բոլոր դեպքերում, յերբ ապահովագրված գույքի վոչնչացումը կամ վնասվածքը տեղի յե ունեցել կոլխոզի վարչության հանցանքով, իսկ քաղաքացիների տնտեսություններում՝ ապահովագրված կամ նրա ընտանիքի չափահաս անդամի հանցանքով:

37. Պետապն իրավունք ունի ժողովրդական դատարանի միջոցով հայց հարուցել ապահովագրական հատուցման վճարված գումարը բռնագանձելու այն անձնավորությունից, վորը հանցավոր է ապահովագրված գույքի վոչնչացման կամ փչացման համար:

38. Պետապն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, յեթե ապահովագրվողը՝ հնարավորություն ունենալով հանդերձ, սահմանված ժամկետին (33-րդ կետ) չի հաղորդել ապահովագրված գույքի վոչնչացման կամ վնասվելու մասին:

## VIII. ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

39. Պարտադիր կոպարային ապահովագրությունը Հայկական ԽՍՀ-ում անց է կացվում ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի 6-րդ սեսիայի կողմից 1940 թվի ապրիլի 4-ին ընդունված «Պարտադիր կոպարային ապահովագրության մասին» օրենքին և այս վորոշմանը համապատասխան:

40. Այս վորոշման հրապարակումով վերացնել.

ա) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1934 թվի օգոստոսի 2-ի վորոշումը՝ «1935 թվի պարտադիր կոպարային ապահովագրության մասին»: (Հայկական ԽՍՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, № 8, հոդ. 81):

բ) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1935 թվի օգոստոսի 13-ի վորոշումը՝ «1936 թվին գյուղական վայրերում և քաղաքներում պարտադիր կոպարային ապահովագրություն անցկացնելու մասին»: (Հայկական ԽՍՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, № 8, հոդ. 81):

գ) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1936 թվի հունիսի 23-ի վորոշումը՝ «1937 թվի պարտադիր կոպարային ապահովագրության մասին»: (Հայկական ԽՍՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, № 7, հոդ. 52):

դ) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1937 թվի օգոստոսի 14-ի վորոշումը՝ «1938 թվի պարտադիր կոպարային ապահովագրության մասին»:

Ուժը կորցրած համարել.

ա) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1939 թվի փետրվարի 15-ի վորոշումը՝ «Վուշի և կանեփի ցանքերը, կարմիր առվույտի սերմանոցները յերաշտից, և գյուղատնտեսական հատուկ ու տեխնիկական բույսերի առանձին տեսակները բույսերի վնասատուներից ու հիվանդություններից պարտադիր կոպարային ապահովագրությունը վերացնելու մասին»:

բ) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1939 թվի հոկտեմբերի 31-ի վորոշումը՝ «Գյուղական վայրերում անձնական սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող շենքերի պարտադիր կոպարային ապահովագրություն սահմանելու մասին»: (Հայկական ԽՍՀ վորոշումների և կարգադրությունների ժողովածու № 5, հոդ. 49):

Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝

**Ա. ՓԻՐՈՒԶՅԱՆ**

Հայկական ԽՍՀ ժողկոմխորհի գործերի կառավարիչ՝

**ՅԵ. ԱՆՄԵՂԻԿՅԱՆ**

Գլավլիտի լիազոր Ա—2504, պատվեր 448, տիրաժ 2000

ԺԿԽ-ին կից «Խորհրդային Հայաստան»-ի տպարան, Երևան

ՀՀ Ազգային գրադարան
NL0213812

43.874